Հայերէն ութերորդ պահը

Հինգշաբթի 8 Ապրիլ 2020

Ա. Գրութիւն – Հեղինակ՝ ***Վաչէ Տէմիրճեան*** (ԴիմաՏեատրին վրայ – 10 Ապրիլ 2020 - Սէն-Մորիս / Փարիզէն դուրս)

տուն տունի վրայ չըլլար

-պատուհանը բաց
որ ներս մտնէ

-պատուհանը գոցէ
որ պաղ չառնէ

-ճաշը լեցուր
անօթի է (ինչպէս միշտ)

-ջուրը լեցուր

ծարաւ է (սուտէն է)

-դուռէն դուրս նետէ
պատուհանէն կը մտնէ

-թերթդ կարդալ կ'ուզես
կու գայ գիրկդ ուզես կամ չուզես

-նէթֆլիքսէն ֆիլմ մը դիտեմ ըսի
պաստառէն առջեւը կը բազմի

-պիր՛ա չիփս եւ պաստրմա

© Hervé Georgelin / Երբé Զարշելéն / Հերվէ Ժորժլէն

փիս-փիս կը նայի կոկորդդ կը մնայ

-կ'ելլեմ որ երկննամ սոֆային վրայ
ինձմէ առաջ բազմած կ'ըլլայ

-սիկարէթին մուխէն կը փախչէր
բայց ատիկա ժամանակին էր

-երբ հեռաձայնս զարնէ
ինձմէ առաջ ալօ՛ կ'ըսէ

-գիշերը ուշ-մուշ պառկիլ կ'ուզեմ
երազիս մէջ իրեն կը տեսնեմ

-ոտքիս տակը միշտ շուքի պէս
եկուր ա՛լ հիմա դուն տես

-ան եղաւ տան փաշան
ես դարձայ իր ծառան

վաչէ
8/4/20
սէն-մորիս
չի-մարիս

Բառապաշար

բանալ ***απαρέμφατο του ανοίγω***

բաց

բացէ'ք

ըլլալ ***απαρέμφατο του είναι***

մտնել ***απαρέμφατο του μπαίνω***

գոցել ***απαρέμφατο του κλείνω***

պաղ, պաղպաղակ

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

պաղ առնել ~ κρυώνω

լեցնել

լեցո՛ւր

լեցուցէ՛ք

անօթի Այս տղան շատ անօթի եղեր: Ո՞վ իր պնակը պիտի լեցնէ: Որմէ՞ ուտելիք ը սպասէ: Ո՞վ իրեն համար եփեց:

Եթէ այսքան անօթի է, թո՛ղ աշխատ, որպէսզի իր հաց-պանիրը շահի: Իր մայրը կա՞մ իր կինը իրեն համար պէ՞տք եփեն: Չէ՛: Այլեւս չ' ըլլար: Ինքն ալ պէտք է խոհանոց մտնէ եւ երկու բան եփէ:

ծարաւ Եթէ ծարաւ ես, ջուր խմէ՛: Ջուր ըսի, ո՛չ քարեջուր: Գաւաթդ տո՛ւր որ լեցնեմ:

ուզես կամ չուզես = **եթէ** ուզես կամ **եթէ** չուզես

թերթ, օրա**թերթ**, շաբաթա**թերթ**, ամսա**թերթ**, պարբերա**թերթ**

Ալիք հայերէն **թերթ** է:

Ալիք պարսկայ **օրաթերթ** է:

Ալիք վերնագիրով **օրաթերթ**ը Թեհերանը լոյս կը տեսնէ:

Ալիք արեւելահայերէն **օրաթերթ** է:

Ալիք դասական ուղղագրու**թեամբ** կը տպուի:

Ձեւով մը Ալիք **օրաթերթ**ը ՀՅԴ-եան կը պատանի:

Ալիք **օրաթերթ**ը պարսկական քաղաքականու**թեամբ** չի խառնուիր:

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

պաստառ

Հեռատեսիլիս *պաստառ*ը **մեծ** է: Գործիքս նոփ-նոր է:

Սինեմայի սրահին *պաստառ*ը **հսկայ** է: Հին սինեմա է բայց շատ շնորհքով տեղ է: Ֆիլմերը սրահին չորս անկիւնէն լաւ կը տեսնուին:

Համաարգիչիս *պաստառ*ը **պզտիկ** է: Խնդիր չէ: Աչքերս լաւ կը բանին: Լաւ կը տեսնեմ:

գալ

եկո'ւր

եկէ'ք

Հոս երկո'ւր: Գիրկս եկո'ւր: Հոս եկո'ւր որ քեզ շոյեմ, որ դուն խռնչէ:

բազմիլ ~ նստիլ

Կատուն սօֆային վրայ պիտի **բազմի**:

Վաչէն ալ թերեւս կ'ուզէր **նստիլ:**

Կատուն ատով չի հետաքրքրուիր:

պառկիլ Կատուն իր տիրոջ անկողինին վրայ կ' ուզէ պառկիլ:

Վաչէն թերեւս ուրիշ մէկու մը կ' ուզէր պառկիլ: Կատուն նկատի պիտի չառնէ: Մեղք է Վաչէն:

© Hervé Georgelin / Երբé Զարշելéն / Հերվէ Ժորժլլէն

շուք Պաստառին վրայ երկու շուք տեսայ: Մէկը՝ տղամարդու մը, միւսը՝ կնոջ մը: Ձոյգին շուքը զիս վախցուց: Վախցայ եւ փախայ: Շուքէն շուտ կը վախնամ:

շուքի պէս

տեսնել

տե'ս

տեսէ'ք

ծառայ, ծառայել ~ υπηρέτης, εξυπηρετώ

Տանտէրը տան **ծառա**ն դարձաւ:

Տանտէրը կատուին **ծառա**ն դարձաւ:

Ինչպէ՞ս եղաւ: Մէկը չի գիտեր:

Բ. Գրութիւն – Հեղինակը՝ ***Քրիստ Խորոյեան*** (**Դ**իմա**Տ**ետրին վրայ – 6 Ապրիլ 2020 - Հալէպ)

Շատերուս համար դժուար է պատմական գիտելիքներ ամբարելը՝ թիւեր, դէպքեր, դէմքեր, դաշնագրեր, պատերազմներ...

Բայց երբ մրցակցութեան ոգին ներկայ է, բոլորն ալ կը ձգտին լաւագոյնին ու կը ջանան սորվիլ այդ բոլորը:

«Մեր Փառահեղ Պատմութիւնը Կամ Արքայազնը» խաղը այդ գիտելիքներուն կու գայ աւելցնելու մրցակցութեան ոգին ու կարելի կը դարձնէ հաճոյքին ու զբաղումին հետ միասին

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

ծանօթանալ հայոց պատմութեան անկիւնադարձային շրջաններուն ու նշանաւոր դէմքերուն:

Ճակատամարտի կը ներկայանա՞ք:

Խաղանք #Մեծով_Պզտիկով եւ #Տունը_Մնանք:

Պատուիրելու համար հեռաձայնել- 0949891403

Բառամթերք

պատմել / պատմական / պատմութիւն ~ λέω, ιστορώ / ιστορικός / ιστορία

ամբարել ~ μαζεύω

դաշնագիր, դաշնագրեր ~ συνθήκη, συνθήκες

պատերազմ ~ πόλεμος

քաղաքացիական պատերազմ ~ εμφύλιος πόλεμος

մրցակցութիւն ~ ανταγωνισμός

ձգտիլ ~ τείνω

լաւ, աւելի լաւ, լաւագոյն ~ καλά, καλύτερο, το καλύτερο (κάλλιστο)

աւելի, աւելցնել, աւելնալ ~ περισσότερο, αυξάνω, περισσεύω

ջանալ ~ προσπαθώ, κάνω κόπο

ջանք թափել

փառահեղ ~ υπέροχος

արքայազն ~ πρίγκηπας

շրջան ~ εποχή / περιοχή

անկիւն, անկիւնադարձային

դառնալ ~ γυρίζω / γίνομαι

վերադառնալ ~ γυρίζω, επιστρέφω

ճակատ ~ μέτωπο

ճակատամարտ ~ μάχη

ճակատագիր ~ μοίρα / πεπρωμένο

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

Գ. Կանոնաւոր բայերուն անցեալ կատարեալը – Αόριστος των ομαλών ρημάτων

սիրել [sirel], *απαρέμφατο του* αγαπώ

սորվիլ [sorvil], *απαρέμφατο του* μαθαίνω

կարդալ [khaghal], *απαρέμφατο του* διαβάζω

Η αντίθεση μεταξύ στιγμιαίου και συνεχούς ποιού ενεργείας είναι παρόμοια σπουδαία στα αρμενικά με το ελληνικό σύστημα. Ενώ στα ελληνικά το ποιόν ενέργεια της στιγμιαιότητας χαρακτηρίζεται συχνά από ένα -**σ**- , στα αρμενικά (στις δύο εκδοχές τα γλώσσας), χαρακτηρίζεται από ένα -**g**-.

Κατάφαση

սիրեցի	սորվեցայ	կարդացի
սիրեցիր	սորվեցար	կարդացիր
սիրեց	սորվեցաւ	կարդաց
սիրեցինք	սորվեցանք	կարդացինք
սիրեցիք	սորվեցաք	կարդացիք
սիրեցին	սորվեցան	կարդացին

Άρνηση

չսիրեցի	չսորվեցայ	չկարդացի
չսիրեցիր	չսորվեցար	չկարդացիր
չսիրեց	չսորվեցաւ	չկարդաց
չսիրեցինք	չսորվեցանք	չկարդացինք
չսիրեցիք	չսորվեցաք	չկարդացիք
չսիրեցին	չսորվեցան	չկարդացին

Այս գիրքը կարդացի: Ոչ մէկ նոր բան չսորվեցայ: Չեմ գիտեր եթէ զայն հաւնեցայ:

→ Διάβασα αυτό το βιβλίο. Δεν έμαθα τίποτα. Δεν ξέρω αν το αγάπησα.

Ճամպրուկս պատրաստեցի: Գիրքիս մասին ալ մտածեցի: Մինչեւ Մէթրոն քալեցի: Մէթրոյին մէջ զայն կարդացի: Միւս ճամբորդներու հետ քիչ մը ն ալ խօսեցայ:

© Hervé Georgelin / Երբէ Ժորժլլէն / Հերվէ Ժորժլլէն

→ Ετοίμασα τη βαλίτσα μου. Σκέφτηκα επίσης το βιβλίο μου. Περπάτησα ως το μετρό. Στο μετρό το διάβασα. Μίλησα επίσης λίγο με άλλους ταξιδιώτες.

Άσκηση - Վարժութիւն **Να χρησιμοποιήσετε τις σωστές μορφές των ρημάτων.**

Ա. Արմէնը այս տարի շատ ________________________________. (*աշխատիլ*)

Բ. Իր աղջկան հետ ________________________________(*խօսիլ*), որովհետեւ հիմա-հիմա գիրք մը________________________________ գնել: (*ուզել*)

Գ. Անոր մայրը անոր համար թաշկինակ ________________________________. (*պատրաստել*)

Դ. Եթէ Արմէնը աղջիկը ________________________________ (*չիշել*), աղջկանը անմիջապէս ________________________________: (*հեռաձայնել*)

Ե. Մենք այս բոյսը շուկայէն ________________________________ (*գնել*): Մեզի զայն սուր ________________________________ (*ծախել*):

Զ. Զատիկին առթիւ ________________________________ (*աղօթել*): Մաման մեզմէ այսքան ________________________________ (*խնդրել*): Միայն մեծ եղբայրս քնաւ ________________________________ (*չուզել*):

Դ. Οργανική πτώση των ουσιαστικών σε -ութիւն

Ονομαστική → Οργανική

-ութիւն → **-ութեամբ** [-utyamp]

-ութիւններ → **-ութիւններով** [-utyunnerov]

Անհամբերութեամբ դասի կ' երթար:

Մեծ **հասկցողութեամբ** բժիշկը հիւանդին մտիկ կ' ընէր:

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

Ատելութեամբ այն հին երկիրը կը յիշէ:

Խանդավառութեամբ պարսկերէն սորվեցաւ:

Ամերիկայէն ազգականներուն **մտերմութեամբ** մեր տունը բացինք:

Իր դժուար եւ ջղային մանչը **լայնամտութեամբ** կ' ընդունի:

Օտար փեսային հանդէպ **այլամերժութեամբ** կը վարուէին: **Տխրութեամբ** ան Հալէպէն Փարիզ վերադարձաւ:

Թուրք հարսը **առատաձեռնութեամբ** ընդունեցին: **Ուրախութեամբ** անոր ընտանիքին հետ նոր հայկական շրջավայրին մասին Լօս Անճըլէսի մէջ կը խօսէր:

Բառապաշար՝

անհամբերութիւն ~ ανυπόμονη

հասկցողութիւն ~ κατανόηση

ատելութիւն ~ μίσος

խանդավառութիւն ~ ενθουσιασμός

մտերմութիւն ~ εγκαρδιότητα

լայնամտութիւն ~ ευρύτητα πνεύματος

այլամերժութիւն ~ ξενοφοβία

առատաձեռնութիւն ~ γενναιοδωρία

տխրութիւն ~ λύπη, στενοχώρια, θλίψη

ուրախութիւն ~ χαρά

Ե. Անցեալ կատար – **Αόριστος**

Վիլման շուկայ գնաց: Շուկայէն ալիւր, շաքար, շուշմայ, թթխմոր, արեւածաղիկի իւղ եւ աղ գնեց: Տուն եկաւ: Ամէն ինչ սեղանին վրայ դրաւ: Յետոյ խորունկ աման մը պահարանէն հանեց: Կամաց-կամաց խմոր մը սկսաւ պատրաստելու: Կ'ուզէր *սիմիթ*ի պէս բաներ պատրաստել: Մտածեց որ լաւ կ'ըլլար եթէ պզտիկ *սիմիթ*ներուն հայկական տառերու ձեւը տար: Պզտիկները այս տարի այբուբենը սորվեցան: Իր մանչը դժուարութեամբ հասկցաւ կամ ընդունեց որ *չ* եւ *ջ* նոյն ձեւով կը հնչուին, որ *ր* եւ *ռ*

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

գրեթէ նոյնն են եւ թէ *յ*-ն յաճախ *հ*-ի պէս կ'ըսուի: Բայց յաջողեցաւ: Տղան ընդունակ է բայց այս բոլորը զարմանալի գտաւ եւ դժուարացաւ: Իր հայրը մարտին սկիզբը Արմէնին եւ Զեփիւռին իր առաջին դպրոցական գիրքը ցցուց: Յին ձեւով բացատրեց տառերուն միջեւ տարբերութիւնները, այսինքն երգերով, ցանկերով եւ խնդիրը վերջացաւ: Աղջիկը այսպիսի դժուարութիւններ չունեցաւ: Յնազանդ է: Թերեւս ատոր համար... Դժուարութիւնները եւ անտրամաբանական բաները այս տարի ալ ընդունեց ու խնդիրը մոռցաւ: *Սիմիթ*ները շուտով պատրաստուեցան: Վիլման զանոնք փուռէն հանեց: Աղուոր ոսկեգոյն երեւոյթ ունէին: Զեփիւռը եւ Արմէնը հիմա եկան: Չեն գիտեր թէ ի՞նչ պիտի գտնեն: Վիլման հոգնեցաւ բայց ուրախ էր: Երախաները հիմա լման շաբաթ մը տունը պիտի մնան: Զատիկը մօտեցաւ:

*Να βρούμε το **απαρέμφατο** κάθε μορφής του αορίστου που βρίσκεται στο κείμενο.*

*Τα πιο **κοινά** ρήματα είναι συχνά **ανώμαλα**. Πρόκειται για μια **πρώτη συνάντηση**.*

Θα δούμε πως κλίνονται συστηματικά σε επόμενα μαθήματα.

Επαναλαμβάνω ότι το ρηματικό σύστημα της αρμενικής δεν είναι τόσο περίπλοκο όσο της ελληνικής.

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

Զ. Γιατί; Επειδή….

Ինչո՞ւ ուրախացար:

- Որովհետեւ Զատիկը եկաւ:

Ինչո՞ւ եկեղեցի գացիք:

- Որովհետեւ Զատկուայ առթիւ միշտ եկեղեցի կ'երթանք:

Ինչո՞ւ մոմ մը վառեցիր:

- Որովհետեւ մոմին լոյսը կը խորհրդանշէ յարութիւնը, յոյսը եւ կեանքին վերսկիզբը:

Ինչո՞ւ այսքան լուրջ կը խօսիս:

- Որովհետեւ մեծ տօն մըն է եւ յուզուեցայ:

Ինչո՞ւ յուզուեցար:

- Որովհետեւ Ամերիկայէն եւ Սուրիայէն ազգականներս մեզի եկան:

© Hervé Georgelin / Երբէ Զարշելեն / Հերվէ Ժորժլլէն

Բառապաշար

ուրախանալ ~ απαρέμφατο του *χαίρομαι* [urakhanal]

Զատիկ < Զատկուայ ~ το Πάσχα < του Πάσχα [zadig] < [zadgva]

եկեղեցի < εκκλησία [yegeghetsi]

մոմ ~ κερί, λαμπάδα [mom]

առիթ < առթիւ ~ ευκαιρία [ar'it] < [ar'tiv]

վառել ~ απαρέμφατο του *ανάβω* [var'el]

խորհրդանշել ~ απαρέμφατο του *ετοιμάζομαι* [khorhhırtanşel]

խորհուրդ ~ μυστήριο (μεταξύ άλλων σημασιών) [khorhurt]

նշան ~ σημάδι [nışan]

յարութիւն ~ ανάσταση [harutyun]

կեանք ~ ζωή [giyanq]

սկսիլ ~ απαρέμφατο του *αρχίζω* [sgsil]

վերսկսիլ ~ απαρέμφατο του *ξαναρχίζω* [versgsil]

սկիզբ ~ αρχή [ısgizp]

վերսկիզբ ~ καινούργια αρχή [verısgizp]

լուրջ ~ σοβαρός [lurç]

լուրջի առնել ~ απαρέμφατο του *παίρνω στα σοβαρά* [lurçi ar'nel]

յուզել ~ απαρέμφατο του *συγκινώ* [huzel]

յուզուիլ ~ απαρέμφατο του *συγκινούμαι* [huzvil]

ազգ ~ έθνος, γένος

ազգական ~ συγγενής

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

Է. Գրութիւն – Κείμενο

Ապրիլ 24ը կարեւոր թուական մըն է: Յաճախ Զատիկի մօտ կ' ըլլայ: Ամբողջ հայութեան համար քաղաքական իմաստ կ'ունենայ: Նոյնիսկ անտարբեր հայերը այս առթիւ իրենց պատմութեան մասին կը մտածեն: Զոր օրինակ՝ կը յիշեն թէ ինչո՞ւ Ֆրանսա կամ Ամերիկա կ'ապրին եւ ո'չ թէ Կ./պոլիս, Զմիւռնիայ, Մուշ, Կարին, Երզինկայ կամ Վան:

24 Ապրիլ 1915 թուականը ժամանակին կը նկատուէր իբր 11 Ապրիլ 1915: Օրացոյցը փոխուեցաւ: Այսօրուայ օրացոյցով Ապրիլ 24ին կը յիշուին օսմանեան տեղահանութեան եւ ցեղասպանութեան հայ զոհերը: Սպաննուեցան մէկ ու կէս միլիոն տղամարդ, կին եւ երախաներ: Վերապրողները քիչ էին: Միայն քանի մը հարիւր հազար. անոնք նա մանաւանդ կը գտնուէին Սուրիոյ անապատները ինչպէս նաեւ Թուրքիոյ ներքին գաւառներուն մէջ: Ոմանք Թուրքիա մնացին եւ ստիպուած իսլամացան, այսինքն թուրքերը կամ քիւրտերը զանոնք իսլամացուցին: Իրենց հաւնած աղջիկները կամ երախաները կը խլէին

© Hervé Georgelin / Երբէ Զարշելեն / Հերվէ Ժորժլլէն

եւ հարս կ' ընէին իրենց : Չիմակուայ սփիւռքահայերը գրեթէ բոլորովին վերապրողներուն թոռները կամ ալ թոռներուն զաւակներն են: Արդի Չայաստանի ժողովուրդին մէկ երրորդը նոյնպէս օսմանեան կայսրութենէն վերապրողներու շառաւիղներէն է:

Այսօրուայ Թուրքիան անցեալը կը մերժէ: Պատմութիւնը եւ իրականութիւնը կ' ուրանայ: Անցեալին կատարուած այս ոճիրը բնաւ չէ պատժուած: Ատոր համար ալ, ըստ իս, Թուրքիան կը շարունակէ մնալ վտանգաւոր պետութիւն մը իր հպատակներուն ինչպէս նաեւ իր շուրջի երկիրներուն համար: Ապրիլ 24ի ցոյցերը նպատակ կ' ունենան այս վիճակը փոխելու: Այս պատճառաւ շատերը այն օրը ցոյցերու կը մասնակցին: Ցուցարարները կը յիշեն զոհերը բայց նաեւ Թուրքիայէն կը պահանջեն ոճիրին ճանաչումը:

Բառապաշար՝

կարեւոր ~ σπουδαίος

թուական ~ ημερομηνία

հայութիւն ~ բոլոր հայերը

քաղաք ~ πόλη / քաղաքական~ πολιτικός / քաղաքականութիւն ~ πολιτική

իմաստ ~ έννοια, σημασία

օրացոյց ~ ημερολογίο

փոխել, փոխուիլ, փոփոխութիւն ~ αλλάζω, αλλάζομαι, αλλαγή

յիշել, յիշուիլ ~ θυμάμαι,

տեղ ~ τόπος / հանել ~ βγάλω / տեղահանութիւն ~ εκτοπισμός

ցեղ ~ φυλή / սպանել ~ σκοτώνω / ցեղասպանութիւն ~ γενοκτονία

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

զոհ ~ θύμα / զոհել ~ θυσιάζω

Վերապրիլ ~ επιβιώνω / Վերապրող ~ επιζώσας

պատ, անապատ, *Սուրիոյ անապատները* ~ τοίχος, έρημος, *Οι έρημοι της Συρίας*

ներս ~ μέσα / ներքին ~ εσωτερικός

գաւառ / գաւառային ~ επαρχία, επαρχιώτικος

իսլամ / իսլամանալ / իսլամացնել ~ ισλάμ / εξισλαμίζομαι / εξισλαμίζω

հաւնիլ ~ beğenmek / իրենց հաւնած աղջիկները ~ τα κορίτσια που τους άρεσαν

խլել ~ բռնի առնել ~ απάγω

հարս ~ νύφη / փեսայ ~ γαμπρός
հիմա < հիմակուայ ~ τώρα, του τώρα
այսօր < այսօրուայ ~ σήμερα, του σήμερον / σημερινός

սփիւռք ~ διασπορά [spürq] / սփիւռքահայ ~ Αρμένιοι της διασποράς [spürqahay]

թոռ ~ εγγόνο ~ torun / թոռնիկ ~ εγγόνο ~ torun

անցեալ ~ παρελθόν / անցնիլ, անցնել ~ περνώ (αμετάβατο / μετάβατο)

մերժել ~ απορρίπτω / մերժում / մեժող

ուրանալ ~ αρνούμαι / ուրանում / ուրացող

կատարեալ ~ τέλειος / կատարել ~ εκτελώ, πράττω / կատարուիլ
կատարուած – կատարուած ոճիրը ~ το πεπραγμένο έγκλημα

ոճիր ~ έγκλημα / ոճրագործ ~ εγκληματίας

պատիժ ~ τιμωρία, ποινή / պատժել ~ τιμωρώ / պատժուիլ ~ τιμωρούμαι
պատժուած ըլլալ

ըստ իս ~ κατά εμέ

շարունակել ~ συνεχίζω / շարունակութիւն ~ συνέχεια

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

վտանգ ~ κίνδυνος / վտանգաւոր ~ επικίνδυνος / վտանգել ~ κινδυνεύω

պետութիւն ~ κράτος

հպատակ ~ υπήκοος / հպատակութիւն ~ υπηκοότητα

շուրջ ~ γύρω – Թուրքիոյ շուրջ ~ γύρω από την Τουρκία – Թուրքիոյ շուրջի պետութիւնները ~ τα κράτη γύρω από την Τουρκία

նպատակ ունենալ ~ έχω σκοπό

վիճակ / կացութիւն ~ κατάσταση

պատճառ ~ αιτία / պատճառաւ ~ [μετάθεση + γεν.] λόγω
պատճառել ~ προκαλώ

մասնակցիլ ~ συμμετέχω / մասնակից ~ συμμέτοχος, συμμετέχων
մասնակցութիւն ~ συμμετοχή

ցոյց ~ διαδήλωση / ցուցարար ~ διαδηλωτής

պահանջել ~ διεκδικώ, απαιτώ
պահանջ / պահանջք
պահանջկոտ ~ απαιτητικός

ճանաչում ~ αναγνώριση / ճանչնալ ~ αναγνωρίζω

Թ. Αόριστος του ρήματος *έχω* / ***ունենալ***

Κατάφαση	*Άρνηση*
ունեցայ	**չունեցայ**
ունեցար	**չունեցար**
ունեցաւ	**չունեցաւ**
ունեցանք	**չունեցանք**
ունեցաք	**չունեցաք**
ունեցան	**Չունեցան**

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հերվէ Ժորժըլէն

Ի՞նչ **ունեցար**:

- Խնդիր մը **ունեցայ:**

Արկա՞ծ մը **ունեցար**:

- Այո, արկած մը **ունեցանք**: Երախաներս տունը էին բայց մօրս հետ օթոյին մէջ էի:

Ինչո՞ւ արկած **ունեցա՞ր**:

- Արկած **ունեցանք,** որովհետեւ ցոյցին մասին կը խօսէինք: Ուշադրութիւն չըրի եւ արագ պատահեցաւ:

Թ. Αόριστος του ρήματος είναι / ***ըլլալ***

Κατάφαση	*Άρνηση*
եղայ	**չեղայ**
եղար	**չեղար**
եղաւ	**չեղաւ**
եղանք	**չեղանք**
եղաք	**չեղաք**
եղան	**չեղան**

Ի՞նչ **եղաւ**:

- Բան մը **չեղաւ**:

Չեմ հաւատար: Ապրիլ 24ն է եւ կ' ըսես որ բան մը **չեղաւ**:

© Hervé Georgelin / Ερβέ Ζωρζελέν / Հէրվէ Ժորժըլէն

- Ա՛հ: Ա՞յս մասին է խօսքդ: Անշո'ւշտ ցոյց մը **եղաւ**: Թուրքիոյ դեսպանատան դիմացը տեղի **ունեցաւ**:

Ոստիկանութի՞ւն կար:

- Անշո'ւշտ: Ոստիկանութիւն կար բայց ոստիկաններուն հետ կռիւ **չեղաւ**: Խորքին մէջ աւելի մեզ կը պաշպանէին քանթէ Թուրքիոյ դեսպանատունը:

Լաւ: Ցոյց **եղաւ** բայց կռիւ, վիրաւոր կամ մեռեալ **չեղաւ**:

- Մեռեալ չկար: Այլեւս ոչ մէկ հայ Թուրքիոյ պատճառաւ պէտք չէ մեռնի: Այն ժամանակը **վերջացաւ**:

© Hervé Georgelin / Երբէ Զարշելեն / Հերվէ Ժորժլլէն